ՀՀ, ք. Վանաձոր

15.03.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 35 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

- «Մաքս 1» ՍՊԸ-ի և ԱՁ Գոհար Էվոյանի կողմից ներկայացված հայտերում արձանագրվել է հրավերի պահանջներին անհամապատասխանություն՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում թերի է լրացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), և մասնակիցներին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցների կողմից սահմանված ժամկետում շտկումը չի կատարվել և չի ներկայացվել ապրանքի շտկված ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1),
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի դիտարկվել, քանի որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Արտակշին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425027) հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում են «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի հիմնադիրը և տնօրենը, ուստի՝ «Արտակշին» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելն ինքնաբերաբար հանգեցնում է «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:
- ԱՁ Տատյանա Բետանյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից,

ԵՎ

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ին, «Մաքս 1» ՍՊԸ-ին, ԱՁ Գոհար Էվոյանին և ԱՁ Տատյանա Բետանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:

2. «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի, «Մաքս 1» ՍՊԸ-ի, ԱՁ Գոհար Էվոյանի և ԱՁ Տատյանա Բետանյանի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Ստորև ներկայացվում է «Գրիգորյանս Ս» ՍՊԸ-ի, «Մաքս 1» ՍՊԸ-ի, ԱՁ Գոհար Էվոյանի և ԱՁ Տատյանա Բետանյանի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Գրիգորյանս Ս» ՍՊԸ	02855732	ՀՀ, ք. Երևան, Այգեստան 9փ տուն 25/1	V			15.03.2024/ «Վ35-ԳՀԱՊՁԲ-24/01»
«Մաքս 1» ՍՊԸ	02894749	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 50/3, տ15	V			15.03.2024/ «Վ35-ԳՀԱՊՁԲ-24/01»
ԱՁ Գոհար Էվոյան	00841267	ՀՀ, ք. Վանաձոր, Գ. Նժդեհի 1/15	V			15.03.2024/ «Վ35-ԳՀԱՊՁԲ-24/01»
ԱՁ Տատյանա Բետանյան	40054061	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան փ. շ. 7 բն.81			V	15.03.2024/ «Վ35-ԳՀԱՊՁԲ-24/01»

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝

ԱՐՄԱՐԴԱ ԱԲՈՎՅԱՆ